

Հասան իշխանին (Կիր. 147), եւ առ հասարակ ամենուն տուած ճաշերը՝ որոց ակնարկեցինք վերեւ: Եւ որ եւ է տանուտէր ալ խնճոյք կու տար վերոյիշեալ զիպուածոց մէջ:

Ազնուազգի տիկնայք եւս, որոնք մեր տոհմային հին բարուց մէջ աւելի ազատ էին՝ քան մահմետական տիրապետութեան ներքեւ այլափոխուած արդի գաւառացի հայուհին, ունէին իրենց «երախանքը», եւ ուզակի անոնց կողմանէ կը հրաւիրուէին «պատուականք յարանց ի տաճարս նոցա», զոր Եղիշէ կը պատմէ իրքեւ շատ սովորական բան մը (174): Եւ միակ վկայութիւնը չէ այս. Արտագերբ ամբոցին մէջ ապաստանող զօրականքն ալ՝ «առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին եւ ըմպէին եւ ուրախ լինէին», աւոր հետ միասին նստելով «ի տաճարին» (Փաւս. 171): Նաեւ արծրունի տիկինն Մարիամ՝ ուխտի երթալով Գլակայ սրբավայրը, իւր սպասաւորաց հրամայեց «ճաշ առնել» տեղւոյն վանականաց. եւ «յորժամ ճաշակեցին», տիկինն յայտնեց իւր ուրախութիւնը եւ հայցեց անոնց օրհնութիւնը (Մամ. 11). ուսկից հաւանական կը թուի՝ թէ ինքն ալ ճաշակից էր անոնց: Եսթերայ պատմութենէն զիտենք՝